ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Տ. Պետրոսյանի (լիազորագիր, տրված՝ 18.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9720-2019 գրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 05.06.2019թ. թիվ 01/61-10650 գրության հիման վրա, 11.06.2019թ. թիվ /26/9720-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/89 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է հետաձգել նիստը և տրամադրել ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու համար:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.06.2019թ. թիվ 01/61-10650 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով ծանուցել է Ընկերությանը՝ հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք

հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գումարային արտահայտությամբ 0 ՀՀ դրամ է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/89 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 11.05.2019թ. հայտ է ներկայացրել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ., 2017թ., 2018թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 20.05.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ծանուցել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9720-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 05.06.2019թ. թիվ 01/61-10650 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես

նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային

եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 11.05.2019թ. հայտ է ներկայացրել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 54 799 920 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ., 2017թ., 2018թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 20.05.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ծանուցել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերությունը որպես շտկում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.05.2019թ. տրված թիվ 877 տեղեկանքը, համաձայն որի՝ ըստ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների և ներկայացված հաշվետվությունների 2019թ. հունվար, փետրվար, մարտ ամիսների ընթացքում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը կազմել է 107 048 849 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ., 2017թ., 2018թ.) համախառն եկամուտի հանրագումարը պակաս է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկից, այսինքն՝ Ընկերությունը չի բավարարում հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից որպես շտկում ներկայացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.05.2019թ. թիվ 877 տեղեկանքին, որի համաձայն՝ 2019թ. հունվար, փետրվար, մարտ ամիսների ընթացքում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը կազմել է 107 048 849 ՀՀ դրամ, ապա հայտնում եմ, որ Կարգի 63-րդ կետը սահմանում է, որ **հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների** համախառն եկամտի հանրագումարը պետք է պակաս չլինի ներկայացված գնային առաջարկից, իսկ Ընկերությունը հայտը ներկայացրել է 2019թ., հետևաբար նախորդող երեք հաշվետու տարիները դիտարկվում են 2016, 2017 և 2018 թվականները: Ուստի արձանագրում են, որ Ընկերության կողմից չի շտկվել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9720-2019 գրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**